## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

## *ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ*

*գ. Հովտաշեն Հ.Շիրազի 10/2*
*Փ. 0725*
*/098/ 43-51-07*
*hovtashen.ararat@mta.gov.am*

*«06» «10» 2020թ.*

# *ՈՐՈՇՈՒՄ 26*

### *ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.10.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 08 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Հաստատել Հովտաշեն համայնքի ավագանու 06.10.2020 թվականի թիվ 08 արտահերթ նիստի օրակարգը /Զեկ. Ս.Մկրտչյան/

*1.* Հովտաշեն Հ-12 միջհամայնքային ավտոճանապարհին արհեստական անհարթություններ կառուցելու համար Հովտաշեն համայնքի 2020 թվականի ֆոնդային բյուջեից գումար տրամադրելու մասին հարցը /Զեկ. Ս. Մկրտչյան/:

*2.* Հովտաշեն համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին հարցը /Զեկ. Ս. Մկրտչյան/:

*3.* Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին հարցը /Զեկ. Ս. Մկրտչյան/:

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Հ. Հարությունյան | | | |
| Գ. Դ. Ներսիսյան | | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | | | |
| Ռ.Օ.Մկրտչյան | | | |

*Համայնքի ղեկավար՝ Ս. Մկրտչյան*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

*ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ*

---

*գ. Հովտաշեն Հ.Շիրազի 10/2*
*Փ. 0725*
*/098/ 43-51-07*
*hovtashen.ararat@mta.gov.am*

*«06» «10» 2020թ.*

# *ՈՐՈՇՈՒՄ 27*

## *ՀՈՎՏԱՇԵՆ Հ-12 ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՆՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի և 42-րդ հոդվածի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Տալ համաձայնություն և թույլատրել ճանապարհատրանսպորտային պատահարների նախականխման նպատակով բնակչության անվտանգությունն ապահովելու համար Հովտաշեն Հ-12 միջհամայնքային ավտոճանապարհին՝ Բարեկամություն, Երիտասարդական և Գ.Նժդեհ փողոցներում արհեստական անհարթություններ կառուցելու համար Հովտաշեն համայնքի 2020 թվականի ֆոնդային բյուջեից գումար տրամադրել:

Տալ համաձայնություն և թույլատրել կնքելու պայմանագիր աշխատանքները կատարելու համար:

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Հ. Հարությունյան | | | |
| Գ. Դ. Ներսիսյան | | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | | | |
| Ռ.Օ.Մկրտչյան | | | |

*Համայնքի ղեկավար՝ Ս. Մկրտչյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*գ. Հովտաշեն Հ.Շիրազի 10/2*
*Փ. 0725*
*/098/ 43-51-07*
*hovtashen.ararat@mta.gov.am*


*«06» «10» 2020թ.*

# *ՈՐՈՇՈՒՄ 28*

## *ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Տալ համաձայնություն և թույլատրել.

*1)* Հովտաշեն համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասում կատարվի փոփոխություն՝ Նախադպրոցական ուսուցում ծրագրի (09-01-01-51) 4239 հոդվածից պակասեցնել 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ գումար և տալ Սպորտային միջոցառումների իրականացում ծրագրի (08-01-01-51) 4639 հոդվածին, Պահուստային ֆոնդ ծրագրի (11-01-02-51) 4891 հոդվածից պակասեցնել 1000000 (մեկ միլիոն) դրամ գումար և տալ Սպորտային միջոցառումների իրականացում ծրագրի (08-01-01-51) 4639 հոդվածին և Կառավարման մարմնի պահպանում ծրագրի (01-01-01-51) 4111 հոդվածից պակասեցնել 1000000 (մեկ միլիոն) դրամ գումար և տալ Սպորտային միջոցառումների իրականացում ծրագրի (08-01-01-51) 4639 հոդվածին: Ընդհանուր գումարը կազմում է 3200000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) դրամ: Ֆուտբոլի խաղադաշտի ամբողջական երկայնքով երկաթյա ցանկապատ կառուցելու համար:

*2)* Հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրի (10-07-01-55) 4819 հոդվածից պակասեցնել 280000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ գումար և տալ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ծրագրի (01-06-01-51)

4819 հողվածին: Հայաստան համահայկական հիմնադրամին գումար փոխանցելու համար (մենք ենք մեր սահմանները, համազգային դրամահավաք):

Քվեարկության

Կողմ դեմ ձեռնպահ

Ա. Հ. Հարությունյան

Գ. Դ. Ներսիսյան

Ռ. Հ. Մկրտչյան

Ռ.Օ.Մկրտչյան

*Համայնքի ղեկավար Ս. Մկրտչյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀՈՎՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


*գ. Հովտաշեն Հ.Շիրազի 10/2*
*Փ. 0725*
*/098/ 43-51-07*
*hovtashen.ararat@mta.gov.am*


*«06» «10» 2020թ.*

# ՈՐՈՇՈՒՄ 29

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի և 48-րդ հոդվածի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Տալ համաձայնություն և թույլատրել համայնքի ղեկավարին ելնելով անհրաժեշտությունից և հաշվի առնելով ներկայիս իրավիճակը Հովտաշեն համայնքի մի շարք ընտանիքներին տրամադրել ֆինանսական օգնություն Սոցիալապես անապահով անձանց աջակցություն ծրագրի (10-07-01-54) 4729 հոդվածից:

Քվեարկության

| | Կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա. Հ. Հարությունյան | | | |
| Գ. Դ. Ներսիսյան | | | |
| Ռ. Հ. Մկրտչյան | | | |
| Ռ.Օ.Մկրտչյան | | | |

*Համայնքի ղեկավար՝ Ս. Մկրտչյան*